ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

# ՄԱՍ I

## Երևանի քաղաքապետի զեկույցը 2025 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա և Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2025 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2024 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծախսերը նախատեսվել են հաշվի առնելով Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները, որի նպատակային իրագործման արդյունքում կունենանք՝

1. Բարեկարգ և հարմարավետ ենթակառուցվածքներով քաղաք
2. ՏՏ լուծումներով հագեցած քաղաք
3. Կանաչ լուսավորություն ունեցող քաղաք
4. Սոցիալապես պաշտպանված քաղաք
5. Արդյունավետ կոմունալ ծառայություններ ապահովող քաղաք
6. Հասանելի կրթության քաղաք
7. Մշակութային քաղաք
8. Հասանելի առողջապահության քաղաք
9. Սպորտի մասսայականացման և երիտասարդության քաղաք
10. Մարդակենտրոն քաղաք
11. Կանաչ և կայուն շրջակա միջավայր ունեցող քաղաք
12. Հասանելի հանրային տրանսպորտային համակարգով քաղաք
13. Էներգախնայող և էներգաարդյունավետ քաղաք
14. Միջազգային համագործակցության քաղաք
15. Զարգացման պոտենցիալ ունեցող քաղաք
16. Զարգացած առևտրի և ծառայությունների քաղաք
17. Զբոսաշրջության քաղաք

Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով սկիզբ դրվեց Երևան քաղաքի ֆինանսական համակարգի բարեփոխումների գործընթացին, մասնավորապես, հաշվի առնելով բյուջետավորման արդի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնեց և առաջին անգամ անցում կատարեց ծախսային բյուջետավորումից դեպի ծրագրային մեթոդաբանությամբ բյուջետավորման:

Նման մեթոդաբանությամբ բյուջետավորումն իր տեղն է գտել նաև 2025 թվականի բյուջեի նախագծում, որը հանդիսանում է քաղաքային զարգացման ծրագրերի տարեկան ֆինանսավորման գլխավոր ուղղորդիչը: Ուղերձին կից փաստաթղթի տեսքով (Աղյուսակ N1, Աղյուսակ N2), ներկայացվում է Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն՝ հիմնված ծրագրային բյուջետավորման ձևաչափի և չափանիշների վրա, որոնք համապարփակ տեղեկատվություն են տրամադրում ֆինանսական ռեսուրսների ուղղորդման նպատակների և արդյունքների վերաբերյալ: Բյուջեի կազմումը նման եղանակով համահունչ է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված բյուջետային համակարգի սկզբունքներին: Մասնավորապես, այն նպատակ է հետապնդում բարձրացնել Երևան քաղաքի ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը, ինչը կօգնի համատեղել և ներդաշնակեցնել ծախսային քաղաքականությունը, միջնաժամկետ ծախսերի և հնգամյա զարգացման ծրագրերը մեկ միասնական փաստաթղթում՝ ապահովելով ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:

## ՄԱՍ II

## Բացատրագիր-Հիմնավորում

## Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են հաշվեկշռվածությունը, միջոցների օգտագործման արդյունավետությունը, իրապակայնության ապահովումը, իրատեսությունը, հասցեագրվածությունը և նպատակայնությունը:

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

*եկամուտների գծով՝* ***159,399,554.2*** *հազ. դրամ,*

*ծախսերի գծով՝* ***159,487,359.7*** *հազ. դրամ,*

*դեֆիցիտը՝* ***87,805.5*** *հազ. դրամ:*

### <u>1. Եկամուտների կանխատեսում.</u>

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 159,399,554.2 հազ. դրամ: Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն ի սկզբանե հաստատվել է 124,639,373.4 հազ. դրամ, ճշտված բյուջեն 125,691,175.9 հազ. դրամ, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 114,830,301.2 հազ. դրամ: Նախատեսված եկամուտները ավելացել են 2024 թվականի հաստատված նույն ցուցանիշի նկատմամբ 34,760,180.8 հազ. դրամով կամ 27,89%-ով, իսկ ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 33,708,378.3 հազ. դրամով կամ 26.82%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 90,234,059.9 հազ. դրամ՝ 2024 թվականին նախատեսվածից 28,719,724.8 հազ. դրամով կամ 46.69%-ով ավելի, իսկ 2023

թվականի փաստացի սեփական եկամուտներից՝ 40,143,028.7 հազ. դրամով կամ 80.14%-ով ավելի: Ըստ էության, Երևան քաղաքի սեփական եկամուտների աճը պահպանվում է: Ստորև գծապատկեր 1.1-ով ներկայացվում է Երևան քաղաքի սեփական եկամուտների աճման դինամիկան սկսած 2021 թվականից:




***Գծապատկեր 1.1- Երևան քաղաքի սեփական եկամուտների դինամիկան 2021-2025 թվականներին.***

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

### 1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկերի և տուրքերի գծով եկամուտը ծրագրվել է 49,152,293.3 հազ.դրամի չափով, 2024 թվականի համար նախատեսված ցուցանիշից 10,253,449.8 հազ. դրամով կամ 26.36 %-ով ավել:

Հարկային եկամուտները ծրագրվել են 33,572,204.3 հազ. դրամի չափով կամ 2024 թվականի համար հաստատված ցուցանիշից 6,827,188.4 հազ. դրամով կամ 25,5 %-ով ավել, ընդ որում ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույքների կիրառման արդյունքում հարկային եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է անշարժ գույքի մասով եկամտատեսակից, որից.

- Անշարժ գույքից գույքային հարկերը նախագծով նախատեսվել է 19,591,476.5 հազ. դրամ կամ 2024 թվականի համար հաստատված ցուցանիշից 6,142,167.0 հազ. դրամով ավելի, իսկ 2023 թվականի փաստացի ցուցանիշից 9,867,033.8 հազ. դրամով:
- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 13,980,727.8 հազ. դրամ, 2024 թվականի բյուջեով հաստատված 13,295,706.4 հազ. դրամի դիմաց կամ 685,021.4 հազ. դրամով ավել, իսկ 2023 թվականի փաստացի հավաքագրված գումարից 1,620,248.4 հազ. դրամով:

Տեղական տուրքերի գծով 2025 թվականին ծրագրվել են 14,990,089.0 հազ. դրամի մուտքեր, 2024 թվականին նախատեսված 11,569,619.0 հազ. դրամի դիմաց կամ 3,420,470.0 հազ. դրամով ավել, ընդ որում ավելացումը մեծամասամբ պայմանավորված է համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունների համար վճարվող տուրքերի ավելացմամբ:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2025 թվականի բյուջեի նախագծով

կանխատեսվել է 1,200,500.0 հազ. դրամ՝ 2024 թվականին նախատեսված ցուցանիշից 552,300.0 հազ. դրամով կամ 31.5%-ով պակաս, ինչը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի հունիսի 25 ի. 158-Ն որոշմամբ ընդունված՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման նոր չափորոշիչներով՝ ապամոնտաժված գովազդային վահանակների, ինչպես նաև դրանց ընդհանուր մակերեսների նվազմամբ:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2025 թվականի համար նախագծով ծրագրվել են 590,000.0 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված ցուցանիշից 5,791.4 հազ. դրամով ավել, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 100,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 490,000.0 հազ. դրամ:

**1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.**

Հիմք ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծի նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 11,110,520.8 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, 2024 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 4,714,665.9 հազ. դրամով կամ 29.79%-ով պակաս: Ընդ որում.

- Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 426,653.2 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշից 27,569.1 հազ. դրամով կամ 6.07%-ով պակաս, որով նախատեսում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհը:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 9,550,014.8 հազ. դրամ, 2024

թվականի հաստատված ցուցանիշից 1,113,192.9 հազ.դրամի չափով կամ 13.19%-ով ավել:

- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 832,792.5 հազ. դրամ, որը գրեթե մոտ է 2024 թվականի ցուցանիշին: (ծրագրերի ցանկը կցվում է):
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսվել են 301,060.3 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշից 98,939.7 հազ. դրամով կամ 24.73%-ով պակաս:

### 1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2025 թվականի նախագծով ծրագրվել են 69,915,343.1 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 54,375,834.1 հազ. դրամի դիմաց, որը 2024 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ եկամուտը ավելացել է՝ 15,539,509.0 հազ. դրամով կամ 28.58%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2025 թվականին ծրագրվել է 235,134.5 հազ. դրամ, 2024 թվականին նախատեսված ցուցանիշից 99,728.6 հազ. դրամով կամ 73.65%-ով ավել: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 1,790, 072.6 հազ. դրամ, 2024 թվականին նախատեսված 1,732,571.1 հազ. դրամի դիմաց կամ 57,501.5 հազ. դրամով (3.32%-ով) ավել,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման

իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 151,716.2 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշից 14,054.2 հազ. դրամով կամ 20.68%-ով ավել,

- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են՝ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ՝ հողերի) վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները, որի գծով եկամուտները ծրագրվել են՝ 329,200.0 հազ. դրամ, 2024 թվականի նախատեսված 322,200.0 հազ. դրամի դիմաց, կամ, որ նույնն է 2.17%-ով ավել:
- պետության կողմից՝ կրթության, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, կամավոր ատեստավորման և մասնագիտական զարգացման ու վարձատրության փոխկապակցված նոր համակարգի ներդրման, Երևանի մետրոպոլիտենի կառավարման, վերակառուցման, ենթակառուցվածքների նորոգման, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի կայարանների կառուցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, Երևանի քաղաքային լուսավորության և Երևանի էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման, Երևանի քաղաքային զարգացման, նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման և հիմնանորոգման, բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման և մի շարք այլ ծրագրերի իրականացման նպատակով (ցանկը կցվում է)՝ Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման համար՝ պետական բյուջեից ստացվող միջոցները 2025 թվականի համար ծրագրվել են 58,054,973.5 հազ. դրամ, 2024 թվականին հաստատված 47,299,851.6 հազ. դրամի դիմաց՝ 10,755,121.9 հազ. դրամով կամ 22.74%-ով ավել,

- Հանրային տրանսպորտային համակարգի բարեփոխման շրջանակում ծրագրվել է՝ օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարները նախատեսել 21,303,814.7 հազ. դրամ՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12 հ.95-Ն և 25.06.2024 թվականի հ.176-Ն որոշումները:
- տեղական վճարների գծով ծրագրվել է 14,972,558.6 հազ. դրամ, 2024 թվականի 18,190,182.5 հազ. դրամի համեմատ՝ 3,217,623.9 հազ. դրամով կամ 17,69%-ով պակաս: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,962,205.1 հազ. դրամի չափով՝ 2024 թվականի նույն ցուցանիշից 227,134.5 հազ. դրամով կամ 5.42%-ով պակաս, համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո՝ ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 158,000.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 400.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցները ավտոկայատեղիում կայանելու համար ծրագրվել է 2,140,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 50,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, արվեստի դպրոցներ և այլն)

ծառայություններից օգտվողների համար՝ 625,000.0 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 45,500.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 1,814.0 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 500.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 13,840.0 հազ. դրամ, այլ տեղական վճարների համար՝ 7,975,299.5 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշից 3,784,355.7 հազ. դրամով պակաս, որը հիմնականում պայմանավորված է նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու կամ դրա փոփոխության կատարելու համար, 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման, ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա և(կամ) ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով շինարարության թույլտվության տեղական վճարների նվազմամբ:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճարների գծով ծրագրվել է 300,000.0 հազ. դրամ՝ 2024 թվականին ծրագրված ցուցանիշից 300,000.0 հազ. դրամով պակաս:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 1,134,600.0 հազ. դրամ, նախորդ տարվա 569,900.0 հազ. դրամի դիմաց,

- մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից եկամուտի գծով նախատեսվել է 19,000.0 հազ. դրամ:
- Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի գծով նախատեսվել է 4,550.0 հազ.դրամ:
- համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցման գծով կանխատեսվում է 15,000.0 հազ.դրամի չափով եկամուտ:
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 826,120.0 հազ. դրամ՝ 2024 թվականի բյուջեով նախատեսված 895,020.0 հազ. դրամի դիմաց:
- նախատեսվում է նաև 9,085,910.0 հազ. դրամի չափով վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Ամփոփելով, Երևան քաղաքի 2025 թվական բյուջեի նախագծով առաջարկվող եկամտային մասը՝ ներկայացվում է 2025 թվականի ընդամենը եկամուտների վերլուծությունը՝ գծապատկեր 1.3.1-ով ըստ առանձին խմբերի տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, և միաժամանակ, սեփական եկամուտների բացվածքը տեսակարար կշռի վերծանման սկզբունքով՝ պատկերվել է գծապատկեր 1.3.2-ում:




***Գծապատկեր 1.3.1- Երևան քաղաքի 2025թ. բյուջեի ընդամենը եկամուտների տեսակարար կշիռը***




***Գծապատկեր 1.3.2- Երևան քաղաքի 2025թ. բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը***

## 2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 159,487,359.7 հազ. դրամի չափով: Ծախսերից 158,656,840.7 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), որտեղ 9,085,910.0 հազ. դրամը հատկացվել է բյուջեի պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդային մաս՝ 17,918,429.0 հազ. դրամ կապիտալ ծախսերի (ֆոնդային բյուջե) ֆինանսավորման համար, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի գումարը կազմում է 8,002,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2024 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ 23,053,193.6 հազ. դրամով, իսկ 2024 թվականի հաստատված բյուջեի ծախսային մասից ավել է 34,569,533.6 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2025 թվականի Երևան քաղաքի սեփական եկամուտների ավելացմամբ, ինչպես նաև պետության կողմից՝ Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման համար՝ պետական բյուջեից ստացվող միջոցների ավելացմամբ:

Երևան համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով խոշոր կապիտալ ելքերից են հանդիսանում բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման ու պահպանման, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները ***(տե՛ս. Գծապատկեր 2.1, 2.2):***




***Գծապատկեր 2.1- Երևան քաղաքում բակային տարածքների և խաղահրապարակների նորոգմանն ու հիմնանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2021-2025 թվականներին.***



***Գծապատկեր 2.2- Երևան քաղաքում նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2021-2025 թվականներին.***

Ստորև ներկայացվում է որոշ կապիտալ բնույթ աշխատանքների, մասնավորապես, «Եզրաքարերի վերանորոգում», «Հենապատերի վերանորոգում», «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում», որոնց մասով կից ներկայացվում է համեմատական վերլուծություն(***տե՛ս. Գծապատկեր 2.3,2.4,2.5):***




***Գծապատկեր 2.3- Երևան քաղաքում եզրաքարերի վերանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2021-2025 թվականներին.***



***Գծապատկեր 2.4- Երևան քաղաքում հենապատերի վերանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2021-2025 թվականներին.***




***Գծապատկեր 2.5- Երևան քաղաքում փողոցների, հրապարակների և այգիների կահավորման ծախսերը՝ 2021-2025 թվականներին.***

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 32.1%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 36.9%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 7.9%:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծի՝ բյուջետային գործառական դասակարգման տեսակարար կշիռը՝ ընդամենը ծախսերի կազմում *(տե՛ս. Գծապատկեր 2.6):*




***Գծապատկեր 2.6- Երևան քաղաքի 2025թ. բյուջեի գործառական դասակարգման ցուցանիշների փեսակարար կշիռը.***

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 9,283,410.0 հազ. դրամի չափով, որից 9,233,410.0 հազ. դրամը վարչական մասը (վարչական եկամուտների 5.8%–ը), իսկ 50.000.0 հազ. դրամը ֆոնդային մասը, իսկ հատկացումը պահուստային ֆոնդի վարչական մասից՝ ֆոնդային բյուջե, կազմում է 9,085,910.0 հազ. դրամ: Վարչական մասի տարբերությունը՝  147,500.0 հազ. դրամը և ֆոնդային մասի՝  50,000.0 հազ. դրամը, կբաշխվի 2025 թվականի բյուջետային տարում՝ չնախատեսված ծախսերի առաջնահերթություններից ելնելով:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. <u>**Կառավարման մարմնի պահպանում**</u> ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 12,756,769.2 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 8%–ը, ինչը 2024 թվականի հաստատված համապատասխան ցուցանիշից ավել է 1,677,374.9 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված <u>***աշխատավարձի ֆոնդը***</u>՝ 8,926,555.9 հազ. դրամ է: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է գործող հաստիքացուցակի հիման վրա: Հաստիքացուցակով նախատեսված 2303 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 2286 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների): Ընդ որում 2024 թվականի ընթացիկ բյուջետային տարում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, այդ թվում վարչական շրջանների աշխատակազմերի հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմել է 2007.3: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է հավելավճարների, արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: <u>***Պարգևատրման ֆոնդը***</u> նախատեսվել է 714,124.5 հազ. դրամ, հաշվարկն իրականացվել է աշխատավարձի ֆոնդի 8%-ի չափով: <u>***Էներգետիկ ծառայությունները***</u> ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք

ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2025 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, ինչպես նաև ներկայումս գործող հանրային ծառայությունների սակագները: Մասնավորապես, այս հոդվածով 2025 թվականին նախատեսվել է 238,573.4 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված ցուցանիշից 36,793.9 հազ. դրամով պակաս: ***Կոմունալ ծառայությունները*** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի ախտահանման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 21,149.5 հազ. դրամի չափով: ***Կապի ծառայությունները*** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 346,944.6 հազ. դրամ, ինչը պակաս է 2024 թվականի ճշտված ցուցանիշից 41,303.6 հազ. դրամով: ***Ապահովագրական ծախսերը*** նախատեսվել են 17,587.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: ***Գույքի և սարքավորումների վարձակալությունը*** ծրագրվել է 73,320.0 հազ. դրամ՝ 2024 թվականին ճշտված ցուցանիշից 6,528.0 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի ծառայությունը: ***Ներքին գործուղումների գծով*** ծախսերի համար նախատեսվել է 6,100.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել ներհանրապետական գործուղումներ, այցեր ՀՀ սահմանամերձ մարզեր՝ երկկողմ համատեղ ծրագրերի զարգացման և ընդլայնման նպատակով, իսկ ***Արտասահմանյան գործուղումների*** գծով՝ հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ծախսերը, 2025 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 59,000.0 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված ցուցանիշի չափով: ***Վարչական ծառայությունների*** գծով

նախատեսվել է 15,250.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև թարգմանչական ծառայությունների համար՝ 2024 թվականին նախատեսված ցուցանիշից 1,230.0 հազ. դրամով ավել**:**
***<u>Համակարգչային ծառայությունների</u>*** գծով ծրագրվել է 113.219.6 հազ. դրամ՝ քաղաքապետարանի համայնքների եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի, տեղական տուրքերի, հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի, գանձապետական և բյուջեի նախագծման ու կառավարման համակարգչային առկա ծրագրերի, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների հաշվապահական հաշվառման համակարգերի, փաստաթղթաշրջանառության համակարգի, աշխարհագրական տեղեկատվական համակարգի, ինչպես նաև առևտրի ծառայությունների ոլորտին վերաբերվող՝ ոգելից խմիչքի, ծխախոտի վաճառքի, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի սպասարկման համար: ***<u>Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների</u>*** համար նախատեսվել է 26,000.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև նեղ մասնագիտական վերապատրաստման համար աշխատակիցների մասնակցելու գործընթացը ապահովելու համար, որը նախատեսվել է 2024 թվականի հաստատված ցուցանիշի չափով: ***<u>Տեղեկատվական ծառայությունների</u>*** գծով ծախսերը նախատեսվել են 42,750.0 հազ. դրամի չափով՝ 2024 թվականին ճշտված ցուցանիշից 10,975.0 հազ. դրամով ավել՝ բրոշյուրների, տպագրության, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, տեղեկատվական բուկլետների պատրաստման, սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայության, լրատվական և գովազդային ծառայությունների, անիմացիոն տեղեկատվական հոլովակների պատրաստման: ***<u>Կառավարչական ծառայությունների</u>*** գծով ծախսերը նախատեսվել են 116,000.0 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված ցուցանիշից 56,000.0 հազ. դրամով ավել: Ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարան կառավարչական

հիմնարկի գույքագրման ծառայությունները, Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հաստատություններին /մանկապարտեզ, դպրոց և այլ/ մատակարարվող սննդատեսակների, Երևան քաղաքի բյուջեի միջոցներով իրականացված /իրականացվող շինարարական աշխատանքների նմուշառման և լաբորատոր փորձարկումների (փորձաքննության) ծառայությունները, տարբեր ոլորտների մասնագետների, փորձագետների ներգրավման և եզրակացությունների ստացման ծառայությունները, ինչպես նաև աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար: ***Ներկայացուցչական ծախսերի*** գծով ծրագրվել է 69,860.0 հազ. դրամ, ինչը ավել է 2024 թվականի հաստատված ցուցանիշից 7,446.5 հազ. դրամով: ***Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները*** ծրագրվել են 79,413.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, ինչպես նաև շինարարական ընթացիկ աշխատանքների համար անհրաժեշտ նախահաշիվների կազմման /թերությունների ակտ/ ծառայությունները: ***Մասնագիտական ծառայությունների*** գծով նախատեսվել է 20,805.1 հազ. դրամի չափով ծախս՝ փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության, վարչական շենքերում վերելակների փորձաքննության տրամադրման համար և ծրագրվել է 2024 թվականի հաստատված բյուջեից 5,760.0 հազ. դրամով ավել: ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել է 252,803.8 հազ. դրամ՝ 2024 թվականի ճշտված ցուցանիշից 32,386.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել է քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված և շահագործվող գույքի, այդ թվում ավտոմեքենաների քանակական և

որակական ցուցանիշները, ընդ որում սույն հոդվածի թվային նվազեցումը մեծամասամբ պայմանավորված է մաշվածության բարձր մակարդակ ունեցող մեքենաների շահագործումից հանելու և նոր ծառայողական մեքենաների ներգրավմամբ: ***<u>Գրասենյակային նյութեր և հագուստ</u>*** հոդվածով ծախսերը ծրագրվել են 68,836.2 հազ. դրամ՝ հաշվարկվել է հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: ***<u>Տրանսպորտային նյութերը</u>*** ծրագրվել են 229,841.5 հազ. դրամի չափով, հաշվարկը իրականացվել է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: ***<u>Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ</u>*** գծով նախատեսվել է 54,012.7 հազ. դրամ՝ 2024 թվականի 33,281.6 հազ. դրամի դիմաց, ավելացումը հիմնականում պայմանավորված է գնաճով և կանաչապատման և աղբահանության աշխատակիցների համար տնտեսական ապրանքների ձեռք բերման անհրաժեշտությամբ: ***<u>Հատուկ նպատակային այլ նյութերի</u>*** գծով ծրագրվել է 16,739.5 հազ. դրամ, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների, հուշամեդալների և կրծքանշանների ձեռք բերում: ***<u>Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին</u>*** հոդվածով ծրագրվել է 367,282.0 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները: ***<u>Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին</u>*** հոդվածով ծրագրվել է 42,600.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշի չափով, որով նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի թվով 6 ավտոբուսների սպասարկման համար, որոնք իրականացնելու են աշխատակազմի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին՝ առավոտյան և

երեկոյան ժամերին, սահմանված 6 ուղղություններով: ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածով նախատեսվել է 58,500.0 հազ. դրամ՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին՝ այնքան որքան 2024 թվականին նախատեսված ցուցանիշն է: ***Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին*** հոդվածով նախատեսվել է 11,000.0 հազ. դրամ, հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով: ***Պարտադիր վճարների*** գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 17,852.5 հազ. դրամ: ***Այլ ծախսեր*** հոդվածով ծրագրվել է 60.000.0 հազ. դրամ՝ 2025 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի համար: ***Տրանսպորտային սարքավորումներ*** հոդվածով նախատեսվել է 346,790.0 հազ. դրամ, որը նախատեսվել է ծառայողական մեքենաների ձեռքբերման նպատակով: ***Վարչական սարքավորումների*** գծով ծրագրվել է 162,262.4 հազ. դրամ՝ 2024 թվականի ճշտված բյուջեից 2,361.2 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ արդեն օգտագործման ոչ պիտանի, դուրս գրման ենթակա գույքը փոխարինելու նպատակով: ***Այլ մեքենաներ և սարքավորումների*** գծով նախատեսվել է 128,195.0 հազ. դրամ, որով նախատեսվում է ավագանու նիստերի դահլիճի կոնֆերանս համակարգի ընդլայնում և բարելավում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նպատակով հատուկ սարքերի ձեռք բերում: ***Ոչ նյութական հիմնական միջոցների*** մասով 2025 թվականին նախատեսվում է 53,400.0 հազ. դրամի շրջանակներում ծրագրերի ապահովման նպատակով ձեռք բերել համակարգերի արտոնագրեր՝ ոլորտի պահպանման և զարգացման նպատակով:

**2.** **Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 84,478.5 հազ. դրամ՝ 2024 թվականի ճշտված բյուջեով

նախատեսված 38,096.8 հազ. դրամի դիմաց: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

3. **<u>Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր</u>** ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանիշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2025 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն: Ներկայումս Fitch միջազգային վարկանիշային գործակալության կողմից Երևան քաղաքին շնորհվել է BB- կայուն վարկանիշ:

4. **<u>Անդամակցության վճարներ</u>** ծրագրով նախատեսվել է 12,895.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիային (LUCI), Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիային (ICLEI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպությանը, ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեային, Տուրիզմի կայուն զարգացման գլոբալ խորհրդին (GSTC), Տուրիստական քաղաքների համաշխարհային ֆեդերացիային (WTCF) և «Բնության պահպանման միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանը անդամակցության նպատակով:

5. **<u>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով ծրագրվել է 33,983.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

6. **<u>Նախագծային աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 1,188,916.0 հազ. դրամ՝ կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային

փաստաթղթերով ապահովելու համար, 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսվածից 774,968.5 հազ. դրամով ավել, ինչը պայմանավորված է «Զորավար Անդրանիկ» և «Սասունցի Դավիթ» կայարանների միջանկյալ հատվածում նոր վերգետնյա կայարանի կառուցման, ինչպես նաև նախատեսվող նոր ծավալուն աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու հետ:

7. **<u>Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն</u>** ծրագրով նախատեսվել է 250,000.0 հազ. դրամ՝ որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» Ի. 204-Ն որոշմամբ հաստատված, Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման և թվայնացման աշխատանքները:

8. **<u>Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 64,400.0 հազ. դրամ 2024 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 44,400.0 հազ. դրամով կամ 222.0%-ով ավել, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի սեյսմիկ անվտանգության, վթարայնության աստիճանի հետազոտումը և դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

9. **<u>Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ</u>** ծրագրով նախատեսվել է 184,700.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 26,500.0 հազ. դրամով կամ 16,75%-ով ավել է 2024 թվականի բյուջեի ցուցանիշից, ավելացումը պայմանավորված է դատական ընթացակարգերի հաճախականության հետ:

10. **<u>Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ</u>** ծրագրով նախատեսվել է 27,050.0 հազ. դրամ, ինչը ներառում է Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, ինչպես նաև ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն

ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

11. **<u>Քաղաքացիական պաշտպանության աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն</u>** ծրագրերով 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 87,750.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է Երևանի ենթակայության կազմակերպությունների համար ձեռք բերել և տրամադրել թվով 120 հակահրդեհային վահանակներ՝ նախնական հրդեհաշիջման առաջնային միջոցներ/լրակազմ/, արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների ուղեցույցեր, ձեռք բերել և տեղադրել թվով 10 հատ հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգեր, թվով 30 հասցեներում կառուցել արտաքին հրշեջ հիդրանտներ, իրականացնել գործող էլեկտրաշչակների և էլեկտրաշչակների կառավարման ու հսկման համակարգերի ընթացիկ սպասարկում և վերանորոգում, ինչպես նաև նախատեսվում է աջակցել Երևան քաղաքում իրականացվող զորակոչի իրականացմանը:

12. **<u>Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 6,510.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի 2025 թվականի օրենքի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

13. **<u>Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ տնտեսական և առևտրային հարաբերությունները կարգավորել Երևան քաղաքում, մասնավորապես, կկարգավորվի գործող իրավախախտ շրջիկ առևտրի կետերի՝ այդ թվում տրանսպորտային միջոցների, կանխարգելման ընթացակարգերը:

14. **<u>Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվում է կարգավորել ինքնակամ

տեղադրված առևտրային օբյեկտների ապամոնտաժման ընթացակարգերը: Ծրագրի բյուջեն կկազմի՝ 15,000.0 հազ. դրամ:

**15.** **<u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի</u> և <u>Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային</u>** ծրագրերի իրականացման համար նախատեսվել 1,314,361.2 հազ. դրամ, որից 230,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ թվով 3 նախադպրոցական հաստատություններում՝ հ. 74, 138, 156 մսուր-մանկապարտեզներ, ինչպես նաև իրականացնել հորիզոնական միջոցառումներ թվով 36 նախադպրոցական և թվով 11 համայնքապատկան առողջապահական, մշակութային շենքերում, որն իր մեջ ներառում է հաստատությունների սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման միջոցառումները:

**16.** **<u>«Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի համաֆինանսավորում</u>** ծրագրի իրականացման համար նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագիծը:

**17.** **<u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ (մանկապարտեզների և այլ հանրային շենքերի էներգարդյունավետվության բարելավում) (պատվիրակված լիազորություններ) և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի</u>**

էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագրի երկրորդ փուլ (մանկապարտեզների և այլ հանրային շենքերի էներգարդյունավետվության բարելավում) (պատվիրակված լիազորություններ) ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 3,065,430.4 հազ. դրամ, որը միտված է աջակցել Երևան համայնքի կողմից ընտրված թվով 32 մանկապարտեզների և թվով 6 պոլիկլինիկաների համայնքային շինությունների կառուցմանը/վերակառուցմանը, էներգաարդյունավետության բարձրացմանն ու սեյսմիկ վերազինմանը, մասնավորապես 2025թ. ընթացքում նախատեսվում է մեկնարկել՝ թվով 7 մանկապարտեզների /հ.17, 39, 46, 64, 72, 93, 133/ շինարարությունը, ինչպես նաև թվով 19 մանկապարտեզների և թվով 6 պոլիկլինիկաների կառուցման/վերակառուցման նախագծերի պատվիրման գործընթացը: Մնացած թվով 6 մանկապարատեզների կառուցման/վերակառուցման նախագծերի վերանախագծման գործընթացը կկազմակերպվի ՄԱԶԾ հետ համագործակցությամբ և վերջիններիս կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներով:

**18.** **Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագրի համայնքային համաֆինանսավորում ծրագրով** նախատեսվել է 175,000.0 հազ.դրամ գումար՝ էներգաարդյունավետության երկրորդ ծրագրի Երևան համայնքի մասնակցության մասնաբաժինը:

**19.** **Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով նախատեսվում է 136,884.5 հազ. դրամ՝ Արզումանյան փողոցից մինչև Լենինգրադյան 2 շենքի տարածքում, Սիլիկյան թաղամասում, Ա. Արմենակյան 97 հասցեից դեպի Նորքի այգիներ տանող ճանապարհահատվածում, Նորք-Մարաշ 2-րդ նրբանցքից դեպի Նորքի այգիներ տանող հատվածում, Աճառյան փ. 18-20 և Աճառյան փողոցից դեպի Շահինյան փողոց տանող հասցեում նոր ոռոգման համակարգեր կառուցելու նպատակով:

**20.** **Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում** ծրագրով նախատեսվել է 3,043,000.0 հազ. դրամ՝ 2024 թվականի բյուջեի՝ 3,652,464.5

հազ. դրամի դիմաց՝ փոսալցման, ճաքալցման և ընթացիկ աշխատանքների իրականացման նպատակով:

**21.** **<u>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր, ծրագրի համակարգման և կառավարման (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրերով նախատեսվել է ընդամենը 8,282,286.4 հազ. դրամ՝ 2024 թվականի բյուջեի 4,262,835.5 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի մասին 2025 թվականի օրենքի նախագիծը, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի ճանապարհաշինարարական աշխատանքները:

**22.** **<u>Եզրաքարերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 261,551.2 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար:

**23.** **<u>Հենապատերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 235,357.8 հազ. դրամ: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի: Ծրագրով նախատեսվում է շուրջ 15 հատ կապիտալ հիմնանորոգումներ, մասնավորապես՝

(Աղյուսակ 3)

| | |
|---|---|
| ***ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Բաղրամյան 62 |
| ***ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Դավթաշեն 2-րդ թաղամասի 17,18,19 շենքերի բակ |
| ***ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Մ. Խորենացի փողոց,<br>2. Գլինկայի փողոց,<br>3. Սարալանջի փողոց,<br>4. Սարի Թաղ 3-րդ փողոց (70 դպրոցի հարևանությամբ հենապատ |

| | |
|---|---|
| ***ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Զավարյան 14- Քաջազնունի,<br>2. Ծիծեռնակաբերդի խճուղի դեպի Լենինգրադյան,<br>3. Ծիծեռնակաբերդի խճուղի դեպի Փյունիք վերականգնողական,<br>4. Տ.Մեծ 39,<br>5. Իսակով 4/1,<br>6. Փարպեցի 11 եկեղեցու բակ,<br>7. Կողբացի դեպի Լալայանց 47ա,<br>8. Ս. Կապուտիկյան 2 |
| ***ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Սերո խանզադյան |

**24. <u>Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով</u>** նախատեսվել է 80,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Կենտրոն վարչական շրջանի Խորենացի փողոցի վերգետնյա հետիոտնային անցման վերանորոգման աշխատանքներ:

**25. <u>Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 295,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2024 թվականի հաստատված բյուջեից 95,000.0 հազ. դրամով: Այն ուղղվելու է Երևան քաղաքի Արարատյան փողոցի էստակադայի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 44 կամուրջների, վերգետնյա անցումների և ուղեանցերի սպասարկմանը:

**26. <u>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ</u>** ծրագրով նախատեսվել է 3,500,000.0 հազ.դրամ՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի համայնքային հողերի դիմաց փոխհատուցումների, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման նպատակով:

**27. <u>Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 1,854,083.8 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 906,764.7.0 հազ. դրամով ավել: Ծրագրի

շրջանակներում նախատեսվում է քաղաքի տարբեր հատվածներում կապիտալ վերանորոգման և սալիկապատման աշխատանքներ: Նախատեսվում է նաև իրականացնել շուրջ 16 հատ մայթերի վերակառուցման կամ հիմնանորոգման աշխատաքներ, մասնավորապես հետևյալ հասցեներում՝

(Աղյուսակ 4)

| | |
|---|---|
| ***ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Խաղաղ Դոնի փողոց |
| ***ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Ամիրյան փողոց,<br>2. Աբովյան Մոսկովյանից մինչև Թումանյան փողոց,<br>3. Թումանյան փողոց,<br>4. Սարյան փողոց՝ Մոսկոսվյան խաչմերուկից մինչև Պուշկին Խաչմերուկ |
| ***ՄԱԼԱԹԻԱ - ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Սեբաստիա փողոցից դեպի <<Եռաբլուր պանթեոն>> տանող ճանապարհի կամարանցումի տրավերտինե սալապատված տարածքի վերակառուցում,<br>2. Մեծարենցի փ.հ. 140 տան մոտից դեպի Լեն-ինգրադյան փ. տանող ճանապարհի աջակողմ- յան հատվածում մայթի կառուցում |
| ***ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Գ. Հովսեփյան փողոց 24/2 հասցեից մինչև Գ. Հովսեփյան 26 (Հ1),<br>2. Նորք 6-րդ նրբացքի փողոցից դեպի 13 փող.,<br>3. Նորքի 17 փող. N 11 տնից դեպի Նորքի 13 փող. N 81 տուն,<br>4. Ա.Արմենակյան փողոց 65 հասցեից միչև Ա. Արմենակյան փողոց 55/2,<br>5. Ա.Արմենակյան փողոց 45 հասցեից մինչև Ա.Արմենակյան փողոց 2/4,<br>6. Օլիմպոս կրթահամալիրի դիմացից դեպի Օ. Դուրյան փողոց,<br>7. Ս. Բաղդասարյան փողոց 154 տնից մինչև Լ. Զաքարյան 174,<br>8. Ս.Բաղդասարյան փողոց 144 հասցեից մինչև Լ.Զաքարյան փողոց 153 |
| ***ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Նուբարաշեն 9փ և 13 փողոցներ, |

**28.** **<u>Փողոցների պահպանում և շահագործում</u>** ծրագրով նախատեսվել է 29,089.1 հազ. դրամ, որը նախատեսված  է լուսացույցերի SIM քարտերի սպասարկման, Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի էլ. էներգիա ծախսերի, Երևան քաղաքի Մատենադարանի հարակից թեք լանջից քարաթափումների կանխարգելման միջոցառումների իրականացման համար:

**29.** **<u>Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել 422,034.0  հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար:

**30.** **<u>Թեքահարթակների կառուցում</u>** ծրագրով՝ Երևան քաղաքում տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով,  նախատեսվել է 24,500.0 հազ. դրամ՝ շուրջ 167 թեքահարթակի կառուցման համար:

**31.** **<u>Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում</u>** ծրագրով նախատեսվել է 272,437.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, հայտարարությունների ցուցատախտակներ: Նախատեսվում է նաև իրականացնել թվով 17 հատ հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի ձեռքբերում և տեղադրում, այգիների, պուրակների ցուցանակների՝ թվով 20 հատ, շենքերի և փողոցների անվանումների միասնական ցուցանակների՝ թվով 1018 հատ, փողոցների ուղենիշերի՝ թվով 150 հատ պատրաստում և տեղադրում, թվով 87 արգելաձողերի տեղադրում, թվով 20 լապտերների, շուրջ 436 հատ աղբամանների, թվով 724 հատ նստարանների ձեռքբերում:

**32.** **<u>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 765,928.6 հազ. դրամ, որի նպատակն է կարգավորել ճանապարհատրանսպորտային ոլորտը՝

ապահովելով դրա անվտանգությունը: Ծրագրի բյուջեն կազմվել է՝ հիմք ընդունելով 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագիծը:

**33.** Հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանում մեկնարկած տրանսպորտային համակարգի բարեփոխումները՝ **Հանրային երթուղային տրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն և Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն** ծրագրերով նախատեսվել է՝ 17,278,234.9 հազ. դրամ տրամադրել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին և 1,194,841.4 հազ. դրամ՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ–ին:

**34.** **Տրանսպորտային համակարգի արդիականացում** ծրագրով նախատեսվել է 2,098,000.0 հազ.դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի 7,647,120.0 հազ. դրամի դիմաց, որով նախատեսվում է ձեռք բերել թվով 15 հատ տրոլեյբուս, ինչպես նաև շարունակել Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքները:

**35.** **Վերելակների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 1,026,840.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի 1,059,500.0 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել բազմաբնակարան շենքերի համար թվով 100 վերելակ, ինչպես նաև հին վերելակների պահպանումն իրականացնելու համար ձեռք բերել և տեղադրել անհրաժեշտ սարքավորումներ:

**36.** **Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 4,876,936.0 հազ. դրամ՝ մետրոպոլիտենին տրամադրելու նպատակով, որից՝ 1,540,207.8 հազ.դրամը որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշը, իսկ 3,336,728.2 հազ.դրամը Երևան համայնքի բյուջեից՝ հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանում մեկնարկած տրանսպորտային համակարգի բարեփոխումները:

**37.** **Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 236,263.3 հազ. դրամ՝ հիմք

ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշը:

**38.** **<u>Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 9,640,000.0 հազ. դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար՝ հիմք ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշը:

**39.** **<u>Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 3,500,000.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի 2025 թվականի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշը՝ Զորավար Անդրանիկ և Սասունցի Դավիթ կայարանների շարժասանդուղքների փոխարինման, թվով 12 անվազույգ և 2150 մ ռելսերի ձեռքբերման և այլ աշխատանքների իրականացման նպատակով:

**40.** **<u>Զբոսաշրջության զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 142,000.0 հազ. դրամ: Մասնավորապես, նախատեսվում է իրականացնել՝ Երևան քաղաքի բազմալեզու զբոսաշրջային քարտեզի տպագրում, թվային զբոսաշրջային քարտեզի ստեղծում, Երևան քաղաքի սոցիալական մեդիա էջերի խթանում, ազգային երաժշտական գործիքների և պարերի ներկայացմամբ միջոցառումների իրականացում զբոսաշրջային սեզոնին և այլ զբոսաշրջությանը նպաստող միջոցառումներ:

**41.** **<u>Դրոշների տեղադրում</u>** ծրագրով նախատեսվել է 25,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է՝ ինչպես տոնական օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրման, պարբերաբար փոխարինման և սպասարկման ծառայությունները:

**42.** **<u>Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար</u>** ծրագրով նախատեսվել է 53,801.7 հազ. դրամ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը՝ նախատեսվել է

հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար, ինչպես նաև նախատեսվել է 42,001.7 հազ. դրամի չափով սուբսիդավորել «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին:

**43.** **<u>Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 720,189.4 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 332.236.0 հազ. դրամով ավել: Ծրագիրը նախատեսված է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ–ին սուբսիդավորելու համար: Ավելացումը պայմանավորված է ընկերության կարողությունների հեռանկարի մեծացման և նոր մասնագետների ներգրավման հետ:

**44.** **<u>Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին</u>** ծրագրով նախատեսվել է 291,142.8 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին աջակցելու նպատակով:

**45.** **<u>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</u>** ծրագրով նախատեսվել են մուտքեր (8,002,000.0) հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են (2,300,000.0) հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են (5,700,000.0) հազ. դրամի չափով

գ) Շարժական գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են (2,000.0) հազ. դրամի չափով:

**46.** **<u>Արտաքին ձևավորում</u>** ծրագրով նախատեսվել է 742,792.0 հազ. դրամ՝ տոնական օրերին և Ամանորին Երևան քաղաքը ձևավորելու, Կենտրոն վարչական շրջանում պատերի որմնանկարչություն իրականացնելու համար,

ինչպես նաև նախատեսվել է 117,792.0 հազ. դրամի չափով սուբսիդավորել «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ին:

**47.** **<u>Ինքնակամ կառույցների քանդում</u>** ծրագրով նախատեսվել է 77,500.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 12,500.0 հազ. դրամով կամ 19.23%-ով ավել: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է Երևան քաղաքում ապօրինի տեղադրված, ինչպես նաև է Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի հունիսի 25 հ. 158-Ն որոշմամբ ընդունված՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման նոր չափորոշիչներին ոչ համապատասխան գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքներ:

**48.** **<u>Ներդրումային ծրագրերի իրականացում</u>** ծրագրով նախատեսվում է 342,383.0 հազ. դրամ, որը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

**49.** **<u>Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 767,000.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի 521,000.0 հազ. դրամի դիմաց, որը նախատեսվում է ուղղել քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրի հրատապ արձագանքմանը:

**50.** **<u>Կաթսայատների և գույքերի պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 800.0 հազ. դրամ: Նշված գումարով նախատեսվում է ուղղել կաթսայատան էլեկտրաէներգիայի ծախսերին:

**51.** **<u>Շենքերի գեղարվեստական լուսավորում</u>** ծրագրով նախատեսվել է 288,544.0 հազ. դրամ, որն ուղղվելու է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի գեղարվեստական լուսավորությանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում շուրջ 17 շենքերի լուսավորությանը, ինչպես նաև Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում շենքերի գեղարվեստական լուսավորման ընթացիկ պահպանման ծախսերին:

**52.** **<u>Աղբահանություն և սանիտարական մաքրում</u>** ծրագրին հատկացվել է 1,058,893.4 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2024

թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 954,247.8 հազ. դրամով: Ծրագրով նախատեսվում է կառուցել աղբամանների համար հարթակներ, ձեռք բերել աղբատար մեքենաներ՝ թվով 6 հատ, թվով 6 բազմաֆունկցոնալ փոքր փոշեկուլ, թվով 6 բազմաֆունկցոնալ մեծ փոշեկուլ, կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներներ՝ թվով 2000 հատ:

**53. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 231,511.0 հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

**54. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր** ծրագրով նախատեսվել է 5,751,100.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները:

**55. Երևանի քաղաքի կոշտ թափոնների կառավարում** ծրագրով նախատեսվում է 28,800.0 հազ.դրամ՝ սուբսիդիայի հատկացում «Երևան քաղաքի նոր աղբավայր» ՓԲԸ-ին:

**56. Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում** ծրագրով նախատեսվել է 62,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի վարչական շրջաններում իրականացնել կոյուղիների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

**57. Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում** ծրագրով նախատեսվել է 17,100.0 հազ դրամ՝ Նուբարաշեն թափոնակուտակիչում բիոգազի հավաքման և այրման կայանի շահագործման և թվով 5 օդի որակի մոնիթորինգի սարքավորումների սպասարկման նպատակով:

**58. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով նախատեսվել է 4,771,513.1 հազ. դրամ, որից 4,591,452.8 հազ. դրամը ուղղվելու է «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանման» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի սուբսիդավորմանը, իսկ 180,060.3 հազ. դրամը նախատեսվում է

Նուբարաշեն խճուղու հյուսիս-արևելյան հատվածում անտառապաշտպանիչ բուֆերային գոտու ստեղծման նպատակով, որից 101,060.3 հազ. դրամը որպես կապիտալ սուբվենցիա տրամադրվելու է ՀՀ պետական բյուջեից (հիմք՝ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագիծ), որպես բնապահպանական հարկերից մասհանումներ:

**59.** **<u>Ախտահանման և միջատազերծման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 27,171.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար:

**60.** **<u>Գետերի հուների մաքրում</u>** ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ Գետառ և Ողջաբերդ գետերի հուների մաքրման նպատակով:

**61.** **<u>Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում</u>** ծրագրով 2024 թվականի բյուջեով նախատեսվել է 81,900.0 հազ. դրամ, որն ուղղվելու է Հրազդանի կիրճում կուտակված աղբի հավաքմանը՝ շուրջ 9000խմ:

**62.** **<u>Թափառող կենդանիների վնասազերծում</u>** ծրագրով նախատեսվել է 278,937.2 հազ. դրամ, որը նախատեսվել է ուղղել «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեության ապահովմանը:

**63.** **<u>Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 179,300.0 հազ. դրամ, որն ուղղվելու է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի տարածքում շների կացարանի կառուցմանը:

**64.** **<u>Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում</u>** ծրագրով նախատեսվել է 2,200.0 հազ. դրամ, որը նախատեսվել է Հրազդան կիրճի՝ Արաբկիր վարչական շրջանի հատվածում ընթացիկ պահպանման աշխատանքների համար:

**65.** **<u>Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալած բնակարանների փոխհատուցման</u>** ծրագրով 2025 թվականի նախագծով

նախատեսվում է 7,920.0 հազ. դրամ՝ Արզումանյան փողոցի վթարային շենքի բնակիչներին փոխհատուցում տրամադրելու նպատակով:

**66.** **<u>Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում</u>** ծրագրով նախատեսվել է 184,675.0 հազ. դրամ՝ Ավան համայնքի Աճառյան փողոցի արտաքին լուսավորության կառուցման նպատակով:

**67.** **<u>Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 3,948,030.7 հազ. դրամ, 2024 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 1,867,225.9 հազ. դրամով կամ 89.7%-ով ավել՝ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: «Երքաղլույս» ՓԲԸ-ին տրամադրվող սուբսիդիան ավելացել է՝ «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրի շրջանակներում տրամադրված վարկի մարումներով և արտաքին լուսավորության ցանցի կառավարման համակարգի կառուցմամբ պայմանավորված:

**68.** **<u>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրերով նախատեսվել է 1,813,900.3 հազ. դրամ, որոնց շրջանակներում շարունակվելու է իրականացվել Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը՝ էներգախնայող լուսադիոդային (LED) տիպի լուսատուների տեղադրման, մալուխների ստորգետնյա անցկացման, հենասյուների վերանորոգում և փոխարինման աշխատանքներ:

**69.** **<u>Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում</u>** ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 670,165.8 հազ. դրամ, որի շրջանակներում համատիրությունների հետ համագործակցությանը զուգահեռ՝ բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման

աշխատանքների իրականացման համար ձեռք կբերվեն անհրաժեշտ նյութեր (այդ թվում՝ թիթեղներ, իզոգամներ, փայտանյութեր)

**70. <u>Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով</u>** նախատեսվել է 5,096,575.7 հազ. դրամ, որը 2024 թվականի բյուջեով հաստատված ցուցանիշից 817,327.2 հազ. դրամով ավել է: Վարչական շրջանների կողմից ուսումնասիրությունների և խնդիրների գույքագրման արդյունքում՝ ընտրված բակերի ընթացիկ նորոգման, բարեկարգման, բակային տարածքներում խաղահրապարակների կառուցման և հիմնանորոգման, բակային տարածքներում աստիճանների վերակառուցման, զրուցարանների, նստարանների ձեռքբերման, ինչպես նաև շինանյութի ձեռքբերման և վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում խաղահրապարակների նորոգման համար:

Կապիտալ հիմնանորոգման և կառուցման մասով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել շուրջ 113 հասցեներում.

(Աղյուսակ 5)

| | |
|---|---|
| ***ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Բաշինջաղյան 173 շենքի բակ,<br>2. Մազմանյան 14 շենքի բակ,<br>3. Լենինգրադյան 50 շենքի բակ,<br>4. Մարգարյան հ. 4,6 շենքերի ետնամաս,<br>5. Մարգարյան 2-րդ նրբանցք հ. 11,13,15 շենքերի բակ,<br>6. Նազարբեկյան 17 թաղ. 17 շենքի բակում ֆուտբոլի դաշտի կառուցում,<br>7. Մարգարյան փողոցում ֆուտբոլի դաշտի կառուցում,<br>8.Շինարարների փ. 15/1 շենքի բակում ֆուտբոլի դաշտի կառուցում |
| ***ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Ավան-Առինջ 1-ին մ/շ 2/5-1/7,<br>2. Դուրյան 48<br>3. Աճառյան փ. 22/11շ. - Շահինյան փ. 1-ին նրբ. բակային տարածք,<br>4. Իսահակյան թաղամաս,<br>5. Չարենց 18 ֆուտբոլի դաշտ,<br>6. Աճառյան 30-2,<br>7.Չարենց 12-13 |
| ***ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1.  Սամիկոնյանց 45,<br>2. Տիգրանյան 10,<br>3. Փափազյան 17,<br>4. Օրբելի 12,<br>5. Սերոբի 10, |

| | |
|---|---|
| | 6. Խաչատրյան 8,<br>7. Կոմիտաս 25/2 – 27,<br>8. Վրացական 15 – 17,<br>9. Փափազյան 21/2 |
| ***ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Դավթաշեն 1-ին թաղամաս 43,44,45 շենքերի բակ,<br>2. Դավթաշեն 2-րդ թաղամաս 13,14,15 ,<br>3. Դավթաշեն 1-ին թաղամաս 32,33 շենքերի բակ,<br>4. Դավթաշեն 4-րդ թաղամաս 20,21,22 շենքերի բակ |
| ***ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Մուրացանի փողոցի h.113/1, h.113/2, h.113/3 շենքերի միացյալ բակ,<br>2. Նուբարաշենի խճ. h.5/4 շենքի բակ,<br>3. Աթոյան անցուղի h. 1 շենքի բակ,<br>4. Արցախի պողոտա h. 6/1 շենքի բակ,<br>5.Արցախի պողոտա h. 10Վ շենքի բակ,<br>6. Խաղաղ Դոնի h. 1 շենքի բակ,<br>7. Խաղաղ Դոնի h. 5 շենքի բակ,<br>8. Խաղաղ Դոնի h.19 շենքի բակ,<br>9. Խաղաղ Դոնի h.19 շենքի 1-ին մուտքի դիմացի բակ,<br>10. Խաղաղ Դոնի h.19/1 շենքի բակ,<br>11. Խաղաղ Դոնի h.23 շենքի բակ,<br>12. Խաղաղ Դոնի h.27 շենքի բակ,<br>13. Խաղաղ Դոնի h.31 շենքի բակ,<br>14. Խաղաղ Դոնի h.35 շենքի բակ,<br>15. Վարդաշենի 11-րդ փողոցի վերջնամասում գտնվող բակային տարածք |
| ***ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Աթենք 6,<br>2. Սայաթ Նովա 4,<br>3. Մաշտոց-37,<br>4. Տ. Մեծ 36բ,<br>5. Ա. Սպենդարյան 3,<br>6. Նալբանդյան 50,<br>7.Եր. Քոչար21/1<br>8. Աբովյան 39<br>9.Դեմիրճյան 40<br>10.Բրյուսովի 23<br>11.Ազաթանգեղոս 7<br>12.Վարդանանց 5ա |
| *Այդ թվում աստիճաններ բակային տարածքներում՝* | 8. Չարենց-Այգեստան,<br>9. Բարձրաբերդից 1-ին փողոց տանող,<br>10. Չարենց 2-րդ նրբանցքի ,<br>11. Պռոշյան 33-35,<br>12. Պարոնյան – եկեղեցի,<br>13. Մյասնիկյան 27/4 |

| | |
|---|---|
| ***ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Սվաճյան 38 շենքի դիմացի բակ,<br>2.Շերամի փ.հ. 33 շենքից դեպի Շերամի փ.հ. 43 շենք գտնվող տարածք,<br>3. Անդրանիկի փ.հհ. 67,69 շենքերի դիմաց գտնվող տարածք,<br>4. Բաբաջանյան փ.հ. 21 շ-ի դիմացի և Բաբաջանյան փ.հ.5/1 շենքի կողամասում գտնվող տարածք,<br>5. Բաբաջանյան փ.հ. 20 շենքի ուղղությամբ՝ «Մուշ» համատիրության ետնամասում գտնվող տարածք,<br>6. Շերամի փ.հ. 49 շենքի դիմաց գտնվող տարածք,<br>7. Օհանովի փ.հհ. 9 և 11 շ-երի միջև գտնվող բակային տարածք,<br>8. Շերամի փ.հհ.7 և 9 շ-երի դիմաց բակային տարածք,<br>9. Անդրանիկի փ.հ.87 շենքի դիմացի տարածք,<br>10.Շերամի փ. հ. 79 շենքի դիմաց և կողամասում գտնվող տարածք,<br>11.Իսակովի փողոց 26շ հարող տարածք,<br>12. Րաֆֆու փ.հհ. 41 և 43 շենքերի ետնամասի ուղղությամբ տարածք |
| ***ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից*** | 1. Ջրվեժ, Մայակ 8 (4, 5, 6, 7) շենքի ֆուտբոլի դաշտի և հարակից տարածք,<br>2. Գալշոյան 4 շենքի հարակից ֆուտբոլի դաշտ,<br>3. Գայի 45 շենքի բակ,<br>4. Մոլդովական 50/2 շենքի հարակից տարածք,<br>5. Բ. Մուրադյան 4 շենքի հարակից ֆուտբոլի դաշտ և խաղահրապարակ,<br>6.Մոլդովական 15 շենքի հարակից խաղահրապարակ |
| *Այդ թվում աստիճաններ բակային տարածքներում՝* | 7. Գայի 28 շենքի հարակից աստիճաններ,<br>8. Թոթովենց 15 շենքի հարակից աստիճաններ |
| ***ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Թիվ 61 դպրոցի հարակից տարածքում մինի ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերի կառուցում,<br>2. Գ.Հովսեփյան 24/30 շենքի բակում տարածքի բարեկարգման և մանկական խաղահրապարակի կառուցում, |
| ***ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1.  6-րդ փողոցի 112 շենքին կից,<br>2. 6-րդ փողոցի 144 շենքին կից |
| ***ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Բագրատունյաց 53 շենքի բակ,<br>2. Շիրակի 2ա շենքի բակ,<br>3. Շիրակի 13 շենքի բակ,<br>4. Շիրակի 15 շենքի բակ,<br>5. Ս. Տարոնցու փողոցի վերջնամասում հարակից այգի,<br>6. Մանթաշյան 8 շենքի բակ,<br>7. Աէրացիա 2/1 շենքի բակի բարեկարգում,<br>8. Եղ. Թադևոսյան 8 շենքի բակ,<br>9. Աէրացիա 3 շենքի բակ,<br>10. Ճարուրի 23, 25 շենքերի միացյալ բակ, |

| | |
|---|---|
| | 11. Ն. Շենգավիթ 11-րդ փողոց 37/3 շենքի հարակից և ֆուտբոլի դաշտ,<br>12.Գ. Նժդեհի 7 շենքի բակ,<br>13. Եղբայրության 16 շենքի բակ,<br>14.  Եղ. Թադևոսյան 11 ֆուտբոլի դաշտ,<br>15. Շիրակի 3-րդ օբյեկտ շենքի բակ,<br>16. Արշակունյանց 48/2 ֆուտբոլի դաշտ,<br>17. Ս. Տարոնցու նրբ /11-13/ միացյալ բակ,<br>18. Շարուրի 28/2 շենքի ֆուտբոլի դաշտ |
| ***ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որից՝*** | 1. Ռուբինյանց 10,12,12/1 շենքերի հարակից տարածք,<br>2. Դրոյի փող. 24 ա,<br>3. Զ. Սարկավագի 125,125/1 շենքերի հարակից տարածք,<br>4. Մ. Մելիքյան 9/3 շենքի հարակից տարածք,<br>5. Զ. Սարկավագի 121/1 շենքերի հարակից տարածք,<br>6. Լեփսիուսի 19   հասցեի հարակից տարածք,<br>7.  Ազատության պողոտա թիվ 14/2 - մինի ֆուտբոլի դաշտի կառուցում,<br>8. Ռուբինյանց 19/1 շ. - ֆուտբոլի դաշտի կառուցում,<br>9. Ուլնեցու 3-րդ փ. 1շ. - ֆուտբոլի դաշտի կառուցում,<br>10. Մ. Մելիքյան 13 և 17 շենքերի ֆուտբոլի դաշտի կառուցում |

71. **Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով** նախատեսվել է ընդհանուր 446,100.0 հազ. դրամ, 2024 թվականի բյուջեով ճշտված ցուցանիշից 76,709.5 հազ. դրամով պակաս, որից 27,000.0 հազ. դրամ գումարը հատկացվելու է վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար:

72. **Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով նախատեսվել է 88,413.5 հազ. դրամ, 2024  թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից  2,113.0 հազ. դրամով դրամով պակաս:

73. **Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով նախատեսվել է հատկացնել 259,600.0 հազ. դրամ, 2024 թվականի բյուջեով նախատեսված  204,180.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում ձեռք են բերվելու բժշկական սարքավորումներ՝ էնդոսկոպիկ կանգնակ (համալրված բրոնխոսկոպով և գաստրոսկոպով), համակարգչային տոմոգրաֆ, թվով 2 անեսթեզիայի սարք, թվով

2 ունիվերսալ վիրահատական սեղան՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության բուժհաստատություններին տրամադրելու նպատակով:

**74.** **<u>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 99,340.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվել է Երևանի քաղաքացիներին ըստ կարիքի գնահատման՝ թվով 555 անձի, կոնտրաստավորմամբ և առանց կոնտրաստավորմամբ կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի, կորոնորագրաֆիկ հետազոտությունների, ինչպես նաև սրտի անոթների ստենտավորման ծառայությունների տրամադրման համար:

**75.** **<u>Սպորտային միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 315,003.2 հազ. դրամ՝ 2024 թվականի բյուջեով նախատեսված 302,378.7 հազ. դրամի դիմաց: Ծրագիրն իր մեջ ներառում է վոլեյբոլի, բասկետբոլի, բռնցքամարտի, ձյուդոյի միջազգային մրցաշարերը՝ Երևանի քաղաքապետի գավաթ, Երևանյան վազքի մրցաշարը, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնություն, մարմնամարզության Երևան քաղաքի բաց առաջնություն, ազատ ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնության, Ռաֆայել Վահանյանի անվան միջազգային մրցաշարերը և ծրագրով նախատեսված այլ միջոցառումներ, այդ թվում նաև սպորտսմենների գործուղումները և պարգևատրումները:

**76.** **<u>Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 520,252.7 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Աղի լիճ» լողավազանի տարածքի բարեկարգման, Պարույր Սևակի անվան այգու բարեկարգման, Ֆիզիկայի բանավանի տարածքի բարեկարգման, Պարոնյան պուրակի բարեկարգման աշխատանքերը: Ինչպես նաև նախատեսվում է Երևանի 2800-ամյակին նվիրված այգու ջրահեռացման ջրամատակարարման ծառայությունների, Սքեյթ-պարկ էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների, Մալաթիա-Սեբաստիա Բ2 թաղամասում գտնվող այգու էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների, Սիրահարների այգու պահպանման ծախսերի և Երևան քաղաքի վարչական

շրջանի այգիներում ընթացիկ նորոգման աշխատանքների, նստարանների և աղբամանների տեղադրման իրականացումը:

**77. <u>Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքներ՝</u>** ծրագրով նախատեսվել է 2,130,296.2 հազ. դրամ՝ հիմք ընդունելով 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագիծը:

**78. <u>Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 12,420.0 հազ. դրամ: Գումարը նախատեսված է Երևան քաղաքի Էրեբունի, Կենտրոն, Նոր-Նորք և Շենգավիթ վարչական շրջանների թվով 7 գործող զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

**79. <u>Գրադարանային ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 810,631.2 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված բյուջեի համեմատ 144,567.9 հազ. դրամով ավել, որը պայմանավորված է գրադարանների աշխատակիցների աշխատավարձերը շուրջ 15%-ի ավելացմամբ: Նախատեսվում է Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

**80. <u>Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում</u>** ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ գրադարանների վերազինման, մասնավորապես, նոր թողարկված, արդի և ժամանակակից գրականության ձեռքբերման նպատակով: Ծրագիրը սկիզբ է առել 2022 թվականից և ունենալու է շարունակական բնույթ:

**81. <u>Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ</u>** ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար նախատեսվել է 293,224.1 հազ. դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ֆինանսավորել՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան», «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» և «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ներին:

**82. <u>Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 683,290.7 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով, 2024 թվականի նախատեսված բյուջեից 150,539.2 հազ. դրամով ավելի, որը պայմանավորված է մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների աշխատակիցների աշխատավարձերի շուրջ 30%-ի ավելացմամբ:

**83. <u>Մշակութային միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 2,731,488.6 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեից 344,773.3 հազ. դրամով ավել: Ծրագիրն իր մեջ ներառում է Կանանց միջազգային օրվա (մարտի 8), Գիրք նվիրելու օրվա, Ջազի միջազգային օրվա (ապրիլի 30), Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա (հունիսի 1), Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա (ապրիլի 24), Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-ստուգատեսի, «Դասականը քո բակում», «Արտիստը՝ դպրոցին», «Գրքի փառատոն» «Կարճամետրաժ ֆիլմերի երևանյան փառատոն», Երևանի 2807 ամյակին նվիրված Էրեբունի-Երևան, Մանկական ինտերակտիվ թատերական ներկայացումների ցուցադրությունների, Ալֆրեդ Շնիտկեի «Մատյան ողբերգության» բալետային ներկայացման, Երևանի օրերը քույր և գործընկեր քաղաքներում, «Կայուն էներգիայի շաբաթ», «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության, «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիա՝ Տեղական ինքնակառավարման համակարգի գրավչության բարձրացմանն և հանրային կառավարման բարելավմանն ուղղված և ձևավորում մշակութային միջոցառումները և ծրագրերը, ինչպես նաև «Երևանի միջազգային բալետային փառատոն», «Երևանի բաց փառատոն», «Ուրբան ֆեսթ», «Ոսկե ծիրան», «Հայ ֆեսթ» փառատոնները, ինչպես նաև ծրագրերի իրականացման նպատակով նախատեսված աջակցություններ:

**84. <u>Կենդանաբանական այգու ցուցադրություններ</u>** ծրագրով նախատեսվել է 443,904.8 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ–ի սուբսիդավորման համար:

**85. <u>Կենդանաբանական այգու հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ Երևանի կենդանաբանական այգու ընդլայնման գործընթացի շրջանակներում փղերի համար նոր ազատավանդակի կառուցման նպատակով:

**86. <u>Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ</u>** ծրագրով նախատեսվել է 177,999.6 հազ. դրամ՝ 2024 թվականի հաստատված բյուջեի համեմատ 24,765.0 հազ. դրամով ավել: Գումարը նախատեսվել է՝ «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱԿ-ներին և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ–ին սուբսիդավորելու նպատակով:

**87. <u>Թատերական ներկայացումներ</u>** ծրագրի 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 444,358.1 հազ. դրամ, Երևանի ենթակայության թվով 3՝ «Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» և «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ների սուբսիդավորման համար:

**88. <u>Թատրոնների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 500,000.0 հազ. դրամ՝ «Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները շարունակելու նպատակով:

**89. <u>Հուշարձանների վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 61,000.0 հազ. դրամ՝ թվով 3 քաղաքային քանդակների ստեղծման, հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

**90. <u>Երիտասարդական միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 3000.0 հազ. դրամ՝ երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ տոնական համերգի և ցուցահանդեսի կազմակերպման, կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան քաղաքի լավագույն կամավորների պարգևատրման և Երևան քաղաքի խնդիրների լուծմանը միտված

երիտասարդական կազմակերպությունների նորարարական ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

**91.** **<u>Նախադպրոցական ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 13,881,780.2 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի 13,224,418.7 հազ. դրամի դիմաց՝ թվով 163 մսուր-մանկապարտեզներին սուբսիդավորելու համար:

**92.** **<u>Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է 210,000.0 հազ. դրամ, ինչի շրջանակներում նախատեսվում է Երևանի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ձեռք բերել համապատասխան գույք, ինչպես նաև 2024 թվականից մեկնարկված՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում՝ անվտանգության նկատառումներից ելնելով, տեսախցիկներիի և տեսահսկման համակարգի ձեռքբերում, տեղադրում և համակարգի գործարկում: Ինչպես նաև նախատեսվում է ձեռք բերել ուսուցողական և զարգացնող մանկական խաղեր: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

**93.** **<u>Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 22,872.6 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ պետական բյուջեի 2025 թվականի օրենքի նախագծի ցուցանիշների հիման վրա (նախակրթարանների մասով):

**94.** **<u>Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 806,275.8 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ պետական բյուջեի 2025 թվականի օրենքի նախագծի ցուցանիշների հիման վրա:

**95.** **<u>Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 3,000,000.0 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝

ՀՀ պետական բյուջեի 2025 թվականի օրենքի նախագծի ցուցանիշների հիման վրա:

**96. Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 11,403.4 հազ. դրամ՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծի հիման վրա:

**97. Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 7,448.0 հազ. դրամ՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախածի հիման վրա:

**98. Հանրակրթական ուսուցում** ծրագրով նախատեսվել է 19,695,453.7 հազ. դրամ, 2024 թվականի 17,589,463.6 հազ. դրամի դիմաց, որը նախատեսվել է 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

**99. Բնագիտական ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 375,230.5 հազ. դրամ՝ հաշվի առնելով 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագիծը:

**100. Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով նախատեսվել է 6,397,806.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված ցուցանիշից 1,517,797.4 հազ. դրամով ավել, որը հիմնականում պայմանավորված է Երևանի ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերի շուրջ 30%-ի ավելացմամբ: Ծրագիրը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը:

101. **Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում** ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքներից ելնելով, Երևանի ենթակայության տակ գտնվող արտադպրոցական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով՝ երաժշտական գործիքների, վարչական և սպորտային գույքերի ձեռք բերման և տրամադրման համար: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

102. **«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 6,793.0 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի չափով, որպես պատվիրակված լիազորություն՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծի հիման վրա:

103. **Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում** ծրագրով նախատեսվել է 60,353.9 հազ. դրամ, 2024 թվականի հաստատված բյուջեի չափով, որպես սուբսիդիա՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

104. **Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 63,738.5 հազ. դրամ՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

105. **Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 32,797.4 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճի և տանիքի հիմնանորոգման աշխատանքերի համար:

106. **Նախադպրոցական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 864,074.5 հազ. դրամ՝ Մալաթիա-

Սեբաստիա վարչական շրջանի հ.97, Աջափնյակ վարչական շրջանի հ.36, Կենտրոն վարչական շրջանի հ.21, Էրեբունի վարչական շրջանի հ.74, Նոր-Նորք վարչական շրջանի հ.112 և հ. 119 մանկապարտեզների բակերի բարեկարգման և հ.99 մանկապարտեզի ցանկապատի հիմնանորոգման, ինչպես նաև մանկապարտեզներում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացման համար:

**107. <u>Դպրոցականների օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 74,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ մանկավարժների խրախուսման միջոցառումներ, առարկայական օլիմպիադաներ, հանրային առողջապահության միջոցառումներ, կիրառական ռազմագիտության միջոցառումներ, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացման ուղղված ծրագրեր, Գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ, ինչպես նաև Երևանի դպրոցականների շրջագայություն «Երևան սիթի տուր» զբոսաշրջային երթուղային ծրագրի շրջանակում:

**108. <u>Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 37,662.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

**109. <u>Հանրակրթական հիմնական ծրագրեր իրակակացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 28,296.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

**110. <u>Կամավոր ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որոկի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 1,062,254.4 հազ. դրամ որպես պատվիրակված

լիազորություն՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

**111. Մարզական օբյեկտների շենքային պայմանների բարելավում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով նախատեսվել է 2,000,000.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով 2025 թվականի ՀՀ պետական բյուջեի օրենքի նախագծով նախատեսված ցուցանիշները: Ծրագրի շրջանակներում մեկնարկելու է Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մազադպրոցի նոր մարզաբազայի կառուցման աշխատանքները:

**112. Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում** ծրագրով նախատեսվել է 15,625.0 հազ. դրամ, հաշվարկվել է՝ նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

**113. Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն** ծրագրով նախատեսվում է 60,392.2 հազ. դրամ, 2024 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 26,304.1 հազ.դրամով ավել: Ծրագիրը նախատեսվում է քաղաքային, մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ներգրավվման համար, ինչպես նաև վարչական շրջաններում խնամակալության և հոգաբարձության անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման համար վերապատրաստումների կազմակերպման նպատակով տարածքների վարձակալության, խնամակալության ինստիտուտի զարգացման նպատակով ԶԼՄ-ներով իրազեկման նյութերի պատրաստման, ինչպես նաև հատուկ նպատակային նյութերի ձեռքբերման համար:

**114. Մշակութային և կրթական միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար** ծրագրով նախատեսվում է 3,500.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այցելություն մշակութային և ուսուցողական վայրեր, 150 երեխաների համար Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մշակութային և կրթական միջոցառումների կազմակերպում,

Ամանորին նվիրված մշակութային և կրթական միջոցառումներում երեխաների ներգրավում:

**115.** **<u>Երեխաներին աջակցման նպատակով հատուկ սենյակների ստեղծում Երևան քաղաքի վարչական շրջաններում</u>** ծրագրով նախատեսվում է 16,000.0 հազ. դրամ, Երևան քաղաքի 8 վարչական շրջանների համապատասխան սենյակների վերանորոգման, կահավորման, երեխայի հետ աշխատելու անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռքբերման նպատակով:

**116.** **<u>Հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</u>** ծրագրով նախատեսվում է 1,000.0 հազ. դրամ, ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված ինտերակտիվ բնույթի ներկայացումների ձեռքբերման և թեմատիկ զրույցների անցկացման նպատակով մասնագետների ներգրավման նպատակով:

**117.** **<u>Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին կայուն եկամուտ ապահովելու նպատակով զբաղվածության ծրագրերի կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, սոցիալական ծրագրեր՝ ուղղված նոր մասնագիտությունների ձեռքբերմանը և աշխատանք գտնելու կարողությունների զարգացմանը:

**118.** **<u>Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 125,924.5 հազ. դրամ, 2024 թվականի նախատեսված բյուջեի 118,432.0 հազ. դրամի դիմաց, որն ուղղվելու է՝ տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերին միջոցառումների իրականացման, էքսկուրսիաների կազմակերպման, ինչպես նաև այլ նպատակային և թիրախային սոցիալական ծրագրերի համար, այդ թվում համապատասխան մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում՝ դպրոցական երեխաներ ունեցող ընտանիքներին լրակազմով պայուսակների տրամադրման, բազմազավակ ընտանիքներին՝ տնտեսական ապրանքներով և հիգիենայի պարագաներով փաթեթների տրամադրման համար:

**119.** **Հասարակական կազմակերպություններին աջակցություն** ծրագրով նախատեսվել է 63,480.0 հազ. դրամ՝ տարբեր սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին սոցիալական ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

**120.** **Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում** ծրագրով նախատեսվել է 33,080.0 հազ. դրամ: Ծրագիրն իր մեջ ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական տաքսի ծառայությունը, տարեցների համար շրջագայությունների կազմակերպումը, պատերազմից տուժած ընտանիքներին կենցաղային և բնակարանային պայմանների բարելավման համար աջակցության տրամադրումը, հոգեբանական/հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ուղղված աջակցության տրամադրումը:

**121.** **Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն** ծրագրով նախատեսվել է 118,559.6 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ ընտանիքներին աջակցության, այդ թվում՝ սննդի և հիգիենայի պարագաների փաթեթների, կենցաղային տեխնիկայի և այլ անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և տրամադրման, բնակարանների մասնակի վերանորոգման և այլ ծրագրերի մշակման և իրականացման:

**122.** **Երևան քաղաքում համայնքային սոցիալական ծառայությունների ներդնում և իրականացում** ծրագրով նախատեսվել է 7,000.0 հազ. դրամ, սոցիալական ծառայությունների տրամադրման համար աշխատանքների իրականացում՝ ծառայությունների կազմակերպման նպատակով ուսումնասիրություն (իրավական, ֆինանսական, գույքային և այլ հիմքերի վերաբերյալ):

**123.** **Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ: Ծրագիրն իր մեջ ներառում է տարբեր աջակցության միավորներ, այդ թվում՝ կենցաղային,

սննդային փաթեթների ու նպատակային նյութերի ձեռքբերման և ընթացիկ վերանորոգումների տեսքով:

**124.** **<u>Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ</u>** ծրագրով նախատեսվել է 26,000.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությո(նները, այդ լիազորորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N.254-Ն որոշումը, համապատասխան թիրախային խմբերին Երևան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով:

**125.** **<u>Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 8,747.2 հազ. դրամ:

**126.** **<u>Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվում է 695,178.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ Երևանի քաղաքապետարանին ենթակա կրթական ոլորտի պետական ոչ առևտրայի կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության աշխատակիցներին սոցիալական փաթեթով ապահովելու համար :

**127.** **<u>Առողջության ապահովագրություն</u>** ծրագրով նախատեսվել է 832,770.0 հազ. դրամ: Յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի գումարը նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, ինչպես նաև գրադարանների, մարզադպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, թատրոնների և թանգարանների, ՄՊՍԿ-ների, մշակույթի կենտրոնների, շախմատի դպրոցների,

մանկապարտեզների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևան հիմնադրամ»-ի, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի, «Երքաղլույս» ՓԲԸ-ի, «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ի, «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների համար:

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 87,805.5 հազ. դրամի չափով դեֆիցիտ (պակասուրդ): Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 592,098.5 հազ. դրամ, իսկ ստացված վարկի մայր գումարի մարմանը նախատեսվում է ուղղել 4,293.0 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 1,500,000.0 հազ. դրամի չափով: Միաժամանակ նախատեսվում է 2,000,000.0 հազ. դրամը ուղղել «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2024 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Այսպիսով, Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *եկամուտների գծով՝ **159,399,554.2** հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ **159,487,359.7** հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ **87,805.5** հազ. դրամ:*

***ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ***